ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 108-Լ

«25» 12 2023 թ.Ք. Երևան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴԻՐՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի ապրիլի 17-ի N 421-Ա որոշմամբ ստեղծվել է միջազգային վարկանիշներում Հայաստանի Հանրապետության ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնները մշտադիտարկող աշխատանքային խումբը (այսուհետ՝ Աշխատանքային խումբ), որի կազմում ընդգրկված է նաև ՀՀ դատախազության ներկայացուցիչը: Աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում համապատասխան ոլորտային մասնագիտական աշխատանքային խմբերի կողմից վեր են հանվել միջազգային զեկույցներում Հայաստանի Հանրապետության կատարողականի վերաբերյալ արձանագրված խնդիրները և ներկայացվել են առաջարկներ դրանց լուծման ուղղությամբ:

Արձանագրված խնդիրներից որոշներն ուղղակի առնչության ունեն ՀՀ դատախազության գործունեության հետ, ինչով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել սահմանել ՀՀ դատախազության այն պատասխանատու ստորաբաժանումների շրջանակը, որոնց գործառույթներին առնչվող ոլորտներին են առավելապես վերաբերում արձանագրված խնդիրները:

Հիմք ընդունելով Աշխատանքային խմբի վերհանած խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներին ժամանակին և պատշաճ մակարդակով ընթացք տալու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. «Ժողովրդավարություն և կառավարում» ոլորտային մասնագիտական աշխատանքային խմբի վերհանած խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներին ընթացք տալու նպատակով նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. «Արդարադատություն և կոռուպցիա» ոլորտային մասնագիտական աշխատանքային խմբի վերհանած խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներին ընթացք տալու նպատակով նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. «Ռազմական ոլորտ և անվտանգություն» ոլորտային մասնագիտական աշխատանքային խմբի վերհանած խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներին ընթացք տալու նպատակով նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելված N 3-ի (կցվում է):

4. Սույն հրամանի հավելվածների առանձին տողերում նշված ստորաբաժանումների ղեկավարներին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը, ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Քրիստինե Գաբուզյանին:

5. ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Քրիստինե Գաբուզյանին՝ ապահովել ստացված տեղեկատվության համակարգումը և մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը դրա տրամադրումը ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի
դեկտեմբերի 25-ի N 108-հրամանի

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՎԵՐՀԱՆԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Ոլորտը	**Բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
Մարդկանց թրաֆիքինգ	Մշակել մարդակնց թրաֆիքինգի գործերի քննության մեթոդաբանություն, դրա հիման վրա անցկացնել վերապատրաստումներ, զարգացնել ռիսկային խմբերի շրջանակում թրաֆիքինգի դեպքերի վերհանման կարողությունը		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լալա Բեգոյան
	Քննարկել օրենսդրական փոփոխությունների հնարավորությունն ու նպատակահարմարությունը՝ զոհակենտրոն քաղաքականության մշակման միջոցով նվազեցնելու կրկնակի տրավմաների ենթարկելու հավանականությունը, ամրապնդելու գաղտնիությունը և տրամադրելու օգնություն տուժող-վկաներին, ինչպես նաև վերանայել փոխհատուցում պահանջելու մեխանիզմները		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
	Սեռական թրաֆիքինգի մասով ուժեղացնել իրավապահ մարմինների կապն ու համագործակցությունն այլ երկրների իրավապահ մարմինների հետ		Միջազգային-իրավական համագործակցության վարչության պետ, Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ

	Թրաֆիքինգի թիրախ երեխաների մասով ուժեղացնել մոնիթորինգը և լուսաբանել		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյան
Խտրականության դեմ պայքար, ատելության խոսք	Մշակել վերապատրաստման դասընթացներ՝ նվիրված խտրականության պաշտպանվող հիմքերի, խտրականության տեսակների, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի միջազգային սահմանումների, խտրական ցուցանիշների հասկացության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացներ կազմակերպել պրակտիկ իրավաբանների, մասնավորապես՝ քննիչների, դատախազների և դատավորների համար		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լալա Բեգոյան
Ընտանեկան բռնություն	Իրավապահ մարմինների սերտ համագործակցություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների ընտրության գործընթացում		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներ
	Օրենսդրական փոփոխությունների կատարում («Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության, ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ՀՀ քրեական օրենսգրքի 508-րդ հոդված), որով պատասխանատվություն կնախատեսվի բռնություն գործադրած անձի նկատմամբ՝ էլեկտրոնային հսկողության միջոցի կիրառումից հրաժարվելու կամ խուսափելու համար		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
	Մշակել ընտանեկան բռնության գործերի քննության ուղեցույցներ՝ արդյունավետ քննություն իրականացնելու կարողությունների զարգացման, ինչպես նաև տուժած անձանց կողմից համագործակցության բացակայության պարագայում դատապարտման հասնելու հմտությունների ձևավորման համար	2024 թվականի 2-րդ կիսամյակ	Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ

	Մշակել իրազեկվածությունը բարձրացնելու ծրագրեր (օրինակ՝ ի՞նչ է ընտանեկան բռնությունը) և բարձրացնել վստահությունը իրավապահ համակարգի նկատմամբ		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյան
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ	Հանցագործությունների հաղորդման էլեկտրոնային և թղթային ձևում հավելել հաշմանդամությունը՝ որպես հաղորդվող հանցագործության շարժառիթ		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
	Իրականացնել օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես՝ ընտանեկան բռնության մասին օրենքում բացակայում է հաշմանդամության վրա հիմնված բռնության բնորոշումը, խտրականության դեմ ուղղված օրենսդրության բացակայությունը հանգեցնում է նման գործերի քննության և հաշվառման ձախողմանը		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
	Իրականացնել վերապատրաստումներ/սեմինարներ իրավապահ համակարգի ներկայացուցիչների համար (հանցագործությունների հաղորդման և տվյալների տարանջատման կոնվենցիայի պահանջների վերաբերյալ, «թվային բռնության» դեպքերի քննության և քրեական գործի պատրաստման ուղղությամբ)		Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լալա Բեգոյան

Հավելված N 2

ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի N 108/1 հրամանի

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱ» ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՎԵՐՀԱՆԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Ոլորտը	**Բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
Խոշտանգումների դեմ պայքար	Մշակել խոշտանգումների դեմ պայքարի ուղեցույցեր՝ դատավորների և դատախազների համար, որոնք կամրագրեն միջազգային իրավունքով նախատեսված երաշխիքների վրա հիմնված ստանդարտները	2024 թվականի 2-րդ կիսամյակ	Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ
	Ազատազրկման վայր ընդունված անձանցից ստանալ և արձանագրել հնարավորինս մանրամասն տեղեկություններ պաշտոնատար անձանց կողմից կատարված գործողությունների, ինչպես նաև դեպքի այլ էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ		Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ

Հավելված N 3

ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի N 108/հրամանի

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ «ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՎԵՐՀԱՆԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Ոլորտը	**Բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
Պատիժներ և հարկադրանքի միջոցներ, բանտային պայմաններ	Պայմանական վաղաժամկետ ազատելու, հարկադրանքի միջոցը փոխելու կամ վերացնելու դեպքերի համար նախատեսել «դրական վարքագիծը» գնահատելու չափանիշներ՝ բացառելու կամայական մեկնաբանությունն ու դրանից բխող խնդիրները	2024 թվականի 1-ին կիսամյակ	Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ
	Քրեակատարողական հիմնարկներում անցկացվող դասընթացների արդյունավետությունը բարձրացնելու, դրանց մասնակցության իմիտացիոն ռիսկերը չեզոքացնելու համար մշակել դատապարտյալների կողմից դասընթացներին մասնակցության արդյունքի ստուգման կառուցակարգ, ստուգման արդյունքները հաշվառել համապատասխան փաստաթղթերում, որի հիման վրա հնարավոր է գնահատել դատապարտյալի վարքագիծը՝ վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցելու համատեքստում: Այլ կերպ ասած՝ գնահատման ենթակա պետք է լինի պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից դրսևորած վարքագծի արդյունքը, այլ ոչ թե բացառապես ներկա գտնվելու փաստը		Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ